ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՆ « Արարատի
պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի 2018թ.
հունվարի 8-ի N 4 նիստում
ՀՀ ԿԳՆ ԱՊՔ-ի մանկավարժական խորհրդի

նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ԿԱՐԳ

1. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

1. Համաձայն 2006թ. հուլիսի 21-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին» № 638-Ն հրամանի՝ սույն կանոնակարգը սահմանվում է ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ) շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման համար:

2. ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում պետական ամփոփիչ ստուգման ուսումնական գործընթացի ավարտական փուլն է, որի նպատակն է որոշել շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

3. Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման նպատակով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում յուրաքանչյուր մասնագիտության գծով ձևավորվում է պետական որակավորող հանձնաժողովներ:

4. Պետական որակավորող հանձնաժողովի գործունեության գործառույթների մեջ են մտնում.

ա) մասնագիտական ուսումնական հաստատության շրջանավարտների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների, նրանց ստացած մասնագիտության գծով ինքնուրույն աշխատանքային գործունեություն իրականացնելու պատասխանատվության ստուգումն ու գնահատումը,

բ) շրջանավարտներին համապատասխան որակավորում շնորհելու և պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) տալու հարցի որոշումը,

գ) մասնագիտական ուսումնական հաստատությունում մասնագետների և արհեստավորների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:

5. Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են մանկավարժական խորհրդի կողմից:

2. ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6. ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգումն անցկացվում է.

- պետական քննություն մասնագիտական առանձին առարկայից,

- պետական քննություն մասնագիտական մի քանի առարկաներից (միջառարկայական քննություն):

7. Առանձին առարկայից պետական քննությունն անցկացվում է հարցատոմսերով, որոնք ներառում են տվյալ առարկայի բովանդակությանը համապատասխան հարցեր:

8. Պետական միջառարկայական քննությունն անցկացվում է հարցատոմսերով, որոնք ներառում են առանձին մասնագիտական առարկաների հիմնական բովանդակությանը համապատասխան հարցեր, որոնք բխում են տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված շրջանավարտի որակավորման բնութագրից:

9. Պետական քննություններն անցկացվում են բանավոր, գործնական աշխատանքների, իրավիճակային խնդիրների ձևով:

3. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

10. Պետական որակավորող հանձնաժողովը՝ կազմված է նախագահից, նախագահի տեղակալից և հանձնաժողովի անդամներից, ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարի և գործում տվյալ օրացուցային տարվա ընթացքում: Հանձնաժողովի կազմը պետք է կազմված լինի առնվազն 5 հոգուց:

11. Պետական որակավորող հանձնաժողովի նախագահին, ըստ մասնագիտական ուսումնական հաստատության ենթակայության, նշանակում է համապատասխան նախարարությունը (գերատեսչությունը)՝ ուսումնական հաստատության տնօրենի առաջարկությամբ, տվյալ ոլորտի առավել բարձրակարգ մասնագետների թվից, որոնք չեն աշխատում տվյալ ուսումնական հաստատությունում:

12. Պետական որակավորող հանձնաժողովում, որպես նախագահի տեղակալ, ընդգրկվում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը:

Պետական որակավորող հանձնաժողովի կազմում ընդգրկվում է քարտուղարը, որին նշանակում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը՝ հաստատության աշխատակիցների կազմից կամ ուսումնական աշխատանքների գծով տեղակալին:

Որպես անդամներ, ընդգրկում են համապատասխան ամբիոնների (ցիկլային (առարկայական) հանձնաժողովների) վարիչները, դասախոսները:

Պետական որակավորող հանձնաժողովների աշխատանքներին մասնակցելու նպատակով կարող են հրավիրվել նաև համապատասխան ոլորտի գործատուներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագետներ:

Պետական որակավորող հանձնաժողովի անվանական կազմն իր հրամանով հաստատում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը՝ պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքներն սկսելու առնվազն 2 շաբաթ առաջ:

4. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

13. Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը փակցվում է ի տես բոլորի՝ պետական քննությունից 1 շաբաթ առաջ:

14. Պետական որակավորող հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայությամբ, կատարվում է պետական քննությունների հանձնումը:

15. Պետական որակավորող հանձնաժողովի նիստի արձանագրության կազմումից հետո՝ պետական քննությունների հանձնման արդյունքները հայտարարվում են նույն օրը:

5. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

16. Պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ՝ պետական քննությունները դրական հանձնած ուսանողին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ):

17. Պետական որակավորող հանձնաժողովի որոշումները պետական քննությունների ժամանակ դրսևորած գիտելիքների գնահատականի, ինչպես նաև որակավորում շնորհելու և դիպլոմ (գերազանցության և ոչ գերազանցության) տալու մասին ընդունվում են պետական որակավորող հանձնաժողովի փակ նիստում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում նախագահի ձայնը որոշիչ է:

6. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

18. Պետական որակավորող հանձնաժողովի բոլոր նիստերն արձանագրվում են արձանագրությունների հատուկ գրքում՝ համաձայն սահմանված ձևերի (NN 1, 2 հավելվածներ):

19. Արձանագրության մեջ նշվում են պետական քննությունների գնահատականները, հատուկ կարծիքները, շնորհված որակավորումը և մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտողի դիպլոմի տեսակը (գերազանցության և ոչ գերազանցության):

20. Արձանագրություններն ստորագրում են պետական որակավորող հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը և նիստին մասնակցած անդամները: